Universitäts- und Landesbibliothek Bonn

Hovhannow Sarkawag Vardapeti haġags k'ahanayowt'ean ew k'ahanayic' ew glxoc' noc'in

Yovhannês <Ôjnec'i>

I Venetik, 1853

urn:nbn:de:hbz:5:1-12096

Visual Library

Gonsoen 3088 (3)

Գաուսեն 3088

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

Գ

ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՅԱՂԱԳՍ
ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ
ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԵՒ ԳԼԽՈՑ ՆՈՑԻՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի Տպարանի Մխիթարեանց
1853

3088

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէպէտեւ ոչ է մեր խնամ կա-
լեալ կարգի՝ բանից կամ ժամանա-
կի շարագրաց յընծայման Սովետ-
բացս հայկականաց, սակայն որ
այժմս 'ի լոյս ձօնի՝ Հատոր Գ, Յով-
հաննու Սարկաւագ Վարդապետի
յաղագս Քահանայութեան Ճառ,
պատուականութեամբ իրին և պի-
տոյից Ճահոլութեամբ ներկայումս
վերնակի ազգիս, գուցէ ինքնին և
զնախադասութեանն պահանջէր ի-
րաւունս: Այսպիսի իմն իրաւունս
ստացեալ ունի գրիչն այն սքանչելի՝
'ի կաճառս բանադրաց և խմաստնոց,
ոչ միայն իւրոցն եւեթ ժամանակա-

կցաց, այլ իշխեմ ասել՝ թէ և հա-
մօրէն դարուց դպրութեան, և ազ-
գայնոյս և արտաքնոց։ Քանզի հո-
գւոյ վիճակեալ վսեմականի և մտաց
ծննդական, սա է՛ւ ազգիազգի մա-
տեանս յօրինեաց, է՛ւ յամենայն ոճ
և յարուեստ՝ քաջ և ճարտար հան-
դիսացաւ, որպէս և վկայեն հան-
դիպողք բանից նորա. զորոց և մեր
յիշատակ արարեալ է այլուր ու-
րեմն*, ուր և զցանկացողսն ծանու-
թութեան՝ առաքեմք։ Ատանօր
զայս մի ինչ յաւելեալ 'ի յուշ, զի
սեփական տիպք հանճարոյ Սար-
կաւագայ են, վսեմութիւն մտաց
և բանից արդարակ դատողութեամբ
հանդերձ. քան զոր արդարեւ չկք
ինչ ցանկալի և հեշտացուցիչ բա-
նասիրաց. բայց միայն զի ռամկաց
և համբակաց՝ սա բազում ուրեք

* Բազմավէպ, Հատ. Ե. 214.

անհաս գտանի , վասն ընդ բարձրա-
թռիչ մտացն թեւս՝ կամելոյ լծա-
կցել և զոտս բանիցն . որով և չկցէ
զերծ 'ի ստգտանաց , զի մանուածոյ
կարգուածով խօսից՝ նսեմացուցա-
նէ յմն զվեհունակ խմաստիցն պար-
զումն,որովք գերազանցէն թերեւս
զամենեքումբ մերովք նախնեօք ,
և ընդ պղատոնականն աթոռակցի
արժանապէս : Բայց ճառս որ արդ
ընծայի՝ պարզաբան է քան զյո-
լովս 'ի ճառից մատենագրին . զորոյ
դատաստան և զօգուտ՝ թողումբ ըն-
թերցանելեաց՝ և նախ նոցին իսկ՝
առ որս բանքն ուղղեալ են . և ապա՝
վարեցելոցն ընդ նոցուն ձեռօք . և
երրորդ՝ վեհագունիցն այնոցիկ ,
որք ձեռս 'ի վերայ եդեալ՝ ընծայեն
քահանայս 'ի սպաս ժողովրդեան
և եկեղեցւոյ . զի և առ նոսա իսկ
վերադառնայ ամենայն գովութիւն
կամ՞ ինչ՝ որ 'ի պատճառս քահա-

նայեց գործեցի 'ի ժողովրդեանն, որ է բազմութիւն հօտին Քրիստոսի։

Մի միայն օրինակ կայր առ մեզ Ճառիս, գրեալ յԵրզնկա, 'ի թուին ՉԴԲ, որ թէպէտեւ ընտիր, այլ տայ փափաքել և այլում գտ-ղափարել։

Զհետ Ճառիս յաւելումք և զնմատաալեց յօդուած մի բանի կամ զնախերգան Ճառի նորին մատենա-գրի յայլմէ օրինակէ։

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՍԱՐԿԱՒԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԱՄՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Կարգ իշխանութեան յաշխարհ մտելոց, և վարչութիւնք մարդկայինք և կենցաղոյս օգուտք բազմաբաշխ և յոքնօրինակք, ունին օրէնքս ըստ իւրաքանչիւր աստիճանի, անհուաղ և առանց յաւելուածոյ զսահմանեալն մատակարարեալ՝ յօգուտ ընդ ձեռամբ անկելոցն. որոց չան և փոյթ ոչ փոքր ինչ յանձին ունել՝ սիրելի և հաճոյ է. որպէս զի մի ղյարմարականաւն՝ առ 'ի գոլ վայելուչ զանցանելով, պարտաւանս 'ի վերայ ածիցեն անձանց, կամ տանջանս 'ի վերհագուսիցն՝ յորոց և նոցայն իշխիցեն : Քանզի արտաքոյ

իրաւանց է և անտեղի բոլորովին, ոչ ըստ արժանի իշխանութեանն գնալ կոչմանն, կամ պղերգաբերել՝ և թերահոգ առ գնել յոր հաւատացաւն հոգեբարձութիւն նմա։ Վասն որոյ զարդարն ընտրելով 'ի խորհրդեան՝ իմաստնագոյնք 'ի գըլուխս կացելոցն, զի մի՛ հասարակացն կորիցէ շահ և օգուտ, զաշխատութիւն տաժանելի և դժուարըմբեր անձամբ ընուլ առանց դանդաղանաց, ոչ ծանր ինչ կամ անպարտ և անարժան գրեն. և զի ոչ 'ի մարմնոյ միայն մարդ, այլ և 'ի բանաւոր և 'ի մտաւոր հոգւոյ կազմեալ հաստատեցաւ, ոչ արժան էր ըստ մարմնոյ ևեթ վերակացութիւնս օրինաւորիլ ամա՝ առանց ինամոյ անձնականի. զի թէ հոգի առաւել է քան զմարմին ըստ անսուտ հրամանին, փութոյ ապա ուրեմն առաւելագունի անբաժ և անկցորդ ոչ եղիցի։ Վասն զի քահանայութեան գործաւորութիւն և պատիւ, ոչ այլ ինչ քան զտնօրէնութիւն հոգւոց առ 'ի փրկութիւն

ունի գիտաւորութիւն. վասն որոյ բարձրագոյն և նազելի յոյժ քան զանուանին յաշխարհի և ամենա-հռչակ ըստ ճշմարտութեանէ. վասն զի թագաւորութիւն ծառայեցու-ցանէ զմարմին, և իշխէ նիւթակա-նին և ապականացուի. փրկութիւն իսկ քահանայութեան յանձն է, և խնամ անմահի և անապականելոյ անձին. նոցայն զօրութիւն կարգ և հրաման մատակարարութեան, քան զստորեւ կացեալ վերջնոց աշխար-հիս մասանց զծանրութիւն վիճա-կելոց՝ ամբառնալ ոչ երբէք ուրեք կարացեալ. քանզի պատերազմ տան 'ի ծովու և 'ի ցամաքի. կամ վասն հայրենեաց յատակի և փըր-կութեան ազգի, կամ յաղագս զեր-ծանելոյ զօտարաց և վտարանգելոյ յինքեանս։ Իսկ սոցա մարմնական ինչ շահից դիւրավատնելոյ և եր-կրականի ընդարձակութեան վիճա-կաց՝ վնասելոց զհոգիս՝ հրաժեշտ տուեալ է ամենեւին զհետ ընթա-նալ, գոնէ խորհրդոք մտաց. վասն զի թէպէտ մարմնով գնալ թուին՝

ոչ եթէ ըստ մարմնոյ կրօնաւորին. սակայն և զորս կապէն յերկրի և կամ արձակէն, նմանապէս և յերկնի ունին։ Զի թէ զուրուք թողուցուն զմեզ՝ հայելով յանկեղծաւոր խոստովանութեանն ապաշաւ և զղջումն՝ թողեալ լինի. և անդրէն ընդդէմ, եթէ զուրուք ունիցին 'ի խստասրտութենէ անդարձիցն՝ կալեալ լիցի. որ ոչ ումեք տուեալ յըստ աշխարհիս զօրաւորաց, կամ գաղանաց ինքնակալաց։

Փրկչին մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի՝ 'ի կատարումն զստուերականն ածել և զհին խրոով գաղըստեամբն և միջնորդութեամբն, քանզի ոչ էին լուծանել զօրէնսայլ ընուլ, մեծացուցանէ գերազարդ պատուով և իշխանութեամբ զքահանայութիւն խորհուրդ. նախ ինքեամբ 'ի լինելն մարդասիրութեամբ ըստ մեզ մարդ կատարեալ, աւդոլոմն և մնալոմն աստուած Ճշմարիտ. վասն զի երևի յայնժամ եղեալ և անուանեալ քահանայ ոչ ըստ կարգին Ահարոնի, այլ ըստ

կարդին Մելքիսեդեկեայ. զի և թագ
արդարութեան, որպէս ունի ահա
անուանդ առակոչութիւն և թագ
խաղաղութեան, 'ի քաղաքէն Սա-
ղեմայ ըստ մեծութեան կանխեցե-
լոյ խորհրդոյն, և է և անուանի.
այլև անհայր և անմայր չհամարեալ
յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և
ոչ կատարած կենաց. զի թէ ստուե-
րակերպ գծագրութիւն այնքան 'ի
ղօրութիւն և բանի արժանաւորու-
թիւն, մինչ զի ասել. Նմանեալ որ-
դւոյն Աստուծոյ կայ մնայ քահանայ
մշտնջենաւոր. զնորուն ինքեան իսկ
զՀշմարտութեանն իր և խորհուրդ
գերամբարձեալ՝ ո՞ թարգմանել
արժանապէս և 'ի հարստամիտ քա-
ջամիտ ուսումն արանց կարացէ
ոք. բազում են կացեալ, ասէ, քա-
հանայք վասն մահու արգել լինե-
լոյ առ 'ի մշտնջենաւորել. իսկ սա
վասն յաւիտենական կալոյ առանց
անցանելոյ ունի զքահանայութիւն:
Տեսանե՞ս զի ոչ միայն 'ի ընուչն զան-
Հաւելի քահանայութեան գործ
կոչեցաւ քահանայ, այլ և այժմ և

առ յապայ յաղագս առ մեզն գը-
թութեան անբաղդատականի՝ կոչի
քահանայապետ, յոր ցանկ և ա-
ռանց յագման պշնուլ աչքք մուսց՝
հրամայէ մեզ նոյն ինքն որ զայսո-
սիկ իմաստասիրէ մեզ Պաւղոս խոր-
հրդածու. Ուստի եղբարք սուրբք,
ասէ, երկնաւոր կոչմանն բաժա-
նորդք. հայեցարուք ընդ առաքեալ
և ընդ քահանայապետ խոստովա-
նութեան մերոյ ընդ Յիսուս Քրիս-
տոս. պատկառեսցուք եղեալքս
անուանակիր, և այնր պատարագի
արժանաւորեալք սպասաւորել.
մի՛ ի դատաստան անձանց մերոց
կերիցուք և արբցուք. մի պարտա-
ւոր լիցուք տերունեան արեանն և
մարմնոյ, առանց արժանաւոր և
աստուածավայելուչ զգուշութեան
մերձենալով. մի կեղծաւորեալք
յաչս մարդկան երևեալ, եթէ ոչ
իցեմք մաքուրք և կատարեալք, ան-
շինջանելի բոցոյն և յարարթուն որ-
դանցն լիցուք Ճարակ առանց սպա-
ռելոյ և մահու։ Ոչ ինչ՛ի մերոցն
զանխլացեալ թագնու յամենահայ-

եաց աչաց ակնածուին մերոյ Քրիս-
տոսի, և զինչ օգուտ մեզ 'ի մարդ-
կային ստակարծ խաբկանացն գոր-
ծիցի. ո՞ 'ի բաց քերեսցէ յանխաբ
աւուրն առենի 'ի մէնջ զբարաչար
պաշարս, և ժանտագործ աղտեղու-
թիւնս զատի ամբարեալ բծկանու-
թեանցն. ո՛ և զդժնդակապէս գը-
ծագրեալ'ի տախտակս ոգոցն զվատ-
թար և զամօթալից գիծսն լուսացէ
մեզ՝ առ 'ի լաւագունի և գեղեցկի
ընդունելութեան գրոյ։

Այժմ լուսացուք, աստէն մա-
քրեսցուք. յետ որոյ և վայելեալն
յաստուածային և սուրբ գոհութե-
նէն առանց ստգտանելոյ և դատա-
պարտութեան համարձակեալ լի-
նի. տացուք 'ի ձեռն ամենիմաստ
գրչին զլուսացեալն և հարթ 'ի խո-
շորութենէ մտաց զընդելութիւն.
զի գրեսցէ զբարիոքն և ամենահա-
ճոյ իմաստս որպէս և կամի, առանց
եղծանելոյ միւսանգամ. որպէս զի
նմին ինքեան քահանայապետին ըն-
տանեգոյն զտեսութիւն՝ և զգործս
և զօծման արժանաւորութիւն կա-

լեալ և ցուցեալ՝ պայծառապէս 'ի կարգ դասու Ճշմարիտ և անպարտաւ խորհրդածուացն անկանիցիմք, և 'ի պարծանս անձանց մերոց ոչ երբէք ուրեք հեռացեալ մեկուսի գտանիցիմք 'ի նմանէ. այլ և զառ 'ի տկարութենէ սխալանացն այսպէս մերձն գոլով և մատչելով՝ աղաչել 'ի կենացս ժամանակի դիւրաւ ընդունիցիմք քաւութիւն և անյիշութիւն. քանզի մեծ 'է ողորմութիւն և առատ՝ որոց ջերմութեամբն հայցեն. երաշխաւոր մեզ և այսմիկ լինի Պաւղոս ասելով. Ունիմք այսուհետեւ քահանայապետս մեծ անցեալ ընդ երկինս զՅիսուս զորդին Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւն. ոչ եթէ ունիմք քահանայապետս որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեանցս մերոց, այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց. մատիցուք այսուհետեւ համարձակութիւն առաջի աթոռոյ շնորհացս նորա, զի ընկալցուք զողորմութիւն և գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան:

Բայց տեսանեմ զյոլովս և 'ի կամակար մոռք մահուչափ մեղուցելոց, որոց և յայտնի իսկ են մեղքն և յառաջագոյն հասեալ 'ի դատաստան, ոչ միայն խիստ և անզեղջս բարուք կամաց 'ի խնդիր թողութեան, այլ և յանդգունս և անամօթս. զի յառաջ գան առանց շիկնելոյ և պատկառանաց և առանց երկիւղի, բացաւ գլխով առնուլ ձեռնադրութիւն քահանայութեան: Արդարեւ ողբոց և մեծամեծաց արժանի է աշխարանաց և արտասուաց՝ գործն: Իսկ որ կցորդն ամենայօժար կամքն եղեւ օտարացն մեղաց, վասն արծաթքաղցութեան՝ և նմանապէս յանդգնութեան, մատեաւ վաղվաղակի եդ ձեռս 'ի վերայ, ոչ նմա տալով հոգի օծութեան և շնորհաց ըստ որում կարծեն, ոչ առանց մոլեգնութեան և զառանցանաց, այլ յինքեանէ 'ի բաց ընկենլով զոր թերեան ունէր՝ յաջողութեան և պաշտաման կամ շնորհաց, և անյոյս առ մեւս անգամ ընդունելոյ, և դատարկացեալ ունայն և ամայի

դառնայ գնալ յինքն. յիրաւի ապա արմատ ամենայն չարեաց գրեցաւ գոլարծաթսիրութիւնն։ Որ և զիսկարիովտացին Յուդաս ամենայն բարբառովն հաւանեցոյց յանդգնել յանտուրբ և յանօրէն վաճառն. և զԴեէզի ծաղկեցուցեալ բորոտութեամբն, տարագրեալ մերժէր յերեսաց և 'ի տեսլենէ սրբոյ մարգարէին և աստուածարելոյ։ Եթէ ոք հաւաստապէս ուշ եդեալ իրացդ՝ ընդ միտ ածցէ ամենայն ստուգութեամբ զանարժան և զաղտեղի անբնական ախտիդ դժնդակութիւն, գտանէ վերագոյն պղծութեան ամենայնի, և անդր քան զամենայն տարօրէն գործս. զի թէ 'ի մարմնական իրս և յարտաքին ատեանս հրաժարեցուցեալէ առնուլ կաշառս, քանի՞օն եւս յեկեղեցւոյ և մանաւանդ 'ի ժառանգաւորաց պարտ ելցէ խոտեալ և յամպարշտութեան գրիլ մասին։

Յոմթոր խրատ տայր մեծի մարգարէին Մովսիսի կացուցանել 'ի վերայ ժողովրդեանն արս իմաստուն ար-

դարակորով որ ասիցեն զկաշառս, գիտելով զի կաշառ կուրացուցանէ զաչս համարձակահայեացս. և սոքա 'ի տան Աստուծոյ կանգնեն կուռս. որպէս զի մի Աստուծոյ այլ մամանայի ծառայեցելոց են. և զպարգեւսն Աստուծոյ՝ որում ոչ եւս են արժանի, ընչիւք ստացեն և ստացուսցեն, ընդ որում և կորնչելոց են: Անիրատ և ռամիկ ժողովրդեանն՝ ոստիկանաց արդարոց և կաշառատեցաց՝ իրաւունք և պէտք եղեն կալ 'ի գլուխս և դատել. իսկ 'ի վերայ մանկանց և եղբարց Քրիստոսի՝ հատուք ոմանք և գողակիցք գողոց, զի զայլն լուռ եղէց: Կացին առ մեք շահապք և պարեպք, խուզակըք և հեռաքրքիրք պատճառաց և իրաց դանդաշահուութեան, ծառայք արտօրէն և խակամիտ կենցաղոյ, արտաքսեալք 'ի տանէն լսա անարժանութեան անազատոյ և վայելման, որք զուղտս կլանեն և զմժղուկս ոչ սիրեն քամել. զարտաքինն ոչ սրբեն զսկաւառակին և բաժակի, և ներքինն լի է հոտով նեխութեան և

գարշելացուցիչ ախտիւ և դժուարա-
լուացաւ. սպիտակութիւն բուոյ ոչ
'ի վերայ փայլակէ բնաւ, և զնորա-
գոյնն եկուլ մահ. դանդիւն և խա-
ւարն 'ի ներքոյ շրջի, և բուրումն
ժահահոտ ապականութեան. լոյս
գիտութեան բացամերժեալ է յե-
րեսաց անգիտութեան խաւարի. ա-
տեն զախւ և ոչ շրջին 'ի նմա, զի ա-
ՀՈՒՄն անդեան, և յանկումն կա-
տարածի տիոց՝ գիշերի արուեստա-
գործեցաւ։ Մի տրտմեացին սուրբք
և լուսաւորք յեկեղեցւոջ և ուղղա-
պէս համառօտիչք բանին վարդա-
պետութեան՝ զայսոսիկ լսել, որք և
գեղեցիկ կարգօք պայծառացուցա-
նեն զնա և հովուեն իմաստութեամբ
Հոգւոյն սրբոյ. այլ զգուշացին մա-
նաւանդ ամենայն զօրութեամբ 'ի
դարանակալութենէ ոսոխին մերոյ,
որ շրջի գոչելով և կլանել խնդրէ,
զորս ոչն գտանէ արթուն։

Երկիւղական են հանդերձեալք
և անյայտութեամբ ղողեալք որպէս
ծոլակ թռչնոյ կամ որոգայթք այ-
ծեմանց և այլոց կենդանեաց աղդա-

կցաց նոցա. որոյ աղաչաւ խրատե-
ցաք յամենայն ժամ կալ յաղօթս
չմուծանիլ 'ի փորձութիւն, այլ
փրկութեամբ հօրն Աստուծոյ զեր-
ծանել 'ի բազմաման և յաղամն-
ղեալ չարին որսորդական հնարից 'ի
կամս իւր, ընդխառնեալ և զմար-
մնոյս տկարացուցողական աշխա-
տութեանց երկս, յառաւել զգու-
շութիւն փրկութեան ոգոց. զոր և
աստուածազանն գործելով Պաւղոս,
ճնշեմ զմարմին իմ և հնազանդե-
ցուցանեմ զսա, գուցէ քարոզս և
վարդապետս այլոց ես ինքն անպի-
տան գտանիցիմ. և եթէ նա զայս
գործէր վասն երկբայելի և չարա-
կասկած մարմնոյս բնակութեան,
զիարդ անհոգս լինելով արժան ու-
մեք ևս խնամ տանել մարմնոյ, առ
'ի գրգռութիւն մարտի ընդդէմ
իշխանականին առաջնորդի անվայե-
լուչ և անտեղի. և անբան իսկ է
զվերտակացութիւն ընկալելոց գա-
ռանց Աստուծոյ՝ տալ զինքեանս
հանգստեան մարմնականի, և ինք-
նասէր պարսաւելոց անձին ախտի,

զորովային սպարարելով. քանզի և ժամանակ իսկ ոչ ունի յայսոսիկ սպարապոյ՝ այր ընարեալ 'ի դարման տանել բազմաց և զգուշանալ նոցա առ ինքեամբ յամենայն ընդդիմութեանց փրկութենէ, ոչ զտունչեան և ոչ զգիշերոյ և ոչ բնաւ 'ի տոցանէ բաղկացելոց ժամանակաց. Զգոյշ լերուք անձանց, ասէ, և հօտիդ յորում եդ զձեզ Հոգին սուրբ առեսուչս: Մինոյ արուեստի կամ մակացութիւն, միոյ և այլոյ իրիք գործոյ՝ թեթևագոյն փութոյ ընդելեալք և իրագէտք յորոց և անուանեցանն իսկ, չկամին որոշ ժամանակ 'ի ջան աշխատութեանն իւրեանց, զի մի ըզշշգրտութիւնն կորուսեալ իբր 'ի մոռացութենէ կամ 'ի դատարկութեանն խամութենէ, ծաղր լինիցին կամ զրկեալք 'ի շահից:

Եւ դու զիարդ որ զմեծն յանձնեցար շահավաճառութիւն, տալ 'ի սեղանաւորան՝ և ընդունել զառ 'ի յաւանդողէն բարիոք հատուցումն, և անուն արժանի աշխատութեանն, սխորժեսցես հանդստեամբ զս-

ւուրս տեսանել, և այն զի ոչ 'ի միոյ կամ յերկուց. այլ 'ի յոլովից ա-նուանեալ եղերիմաստուն արուեստից, նշանակող զըստ նոցայն հան-գամանաց Ճարտարապետական աշ-խատութեան գործս. Բժիշկ, հրեշ-տակ, քաւիչ, վարդապետ, դաս-տիարակ, հայր, դայեակ, աւետա-բանիչ, հովիւ, զօրագլուխ, մարգիչ, լոյս, քարոզ, տնկագործ, մշակ, գլուխ՝ յետ գլխոյն, առաջնորդ, տեսուչ, հրաւիրակ, լուանող, որ-սորդ, տաճարապետ, հարսնածու, հաւատարիմ ծառայ, պահապան, գանձակալ, կերակրիչ, մատուակ, զգեցուցանող, նուիրիչ, միջնորդ, դատաւոր, հազարապետ, տնօրէն, հանգիստապետ, որոշիչ, կամք Աստուծոյ, պաշտօնեայ, դէտ, ժառանգաւոր, կատարիչ, խորհրդա-ծու. և այլ միանգամ որովք 'ի ձեռն որոց խորհուրդ աստուածպաշտութեանն ընու և եկեղեցի Քրիստոսի գեղեցկապէս և քաջ-ուէն կարգաւք մատակարարի և ամբողջ մնայ:

Ա. Արդ որքան պէտք են քրիստոնց զնշանականցս այսոցիկ կատարել կամեցողաց դիտաւորութիւն, անուանց և բանից և այլոց եւս բառից 'ի գիրս կացելոց սոցուն նմանեաց. քանզի յայսոսիկ գլխաւորի քահանայագործութեանն իր և անուն: Բժշկել՝ ոչ անարուեստապէս և թերահմտաբար կամ սղապունիւ աշխատութեամբ զախտացեալ և զվիրաւոր ոգիս, 'ի դժնդակ խածման կամակոր օձին և 'ի բնաւորականացն և յանբնականացն ախտից, զտաւապանս յանձն առնելով՝ երկայն աշխատութիւնս, ըստ Պաւղոսի՝ անձին զայլոցն համարելով զհիւանդութիւնս, այնքան մինչ զի ընդ նոսա դժուարակիր եղեալ սիրով ողբայ. և զամենիմաստն 'ի կիր արկեալ արուեստ՝ բժշկել մատչի, երբեմն քաղցրագունիւք արբուցմամբք դեղոց, որդեակս անուանելով և վերատին երկունս՝ մինչեւ նկարեսցի Քրիստոս 'ի նոսա միւսանգամ ծննդեամբ. իսկ երբեմն

զՃաշակելիս մտացն դառնացուցա-
նելով 'ի ձեռն սատակման բանիցն
յանդիմանութեան , յորժամ զայ-
նոսիկ 'ի շահ օգտութեան լինել տե-
սանէր . և ապա առողջոցն հրամայ-
էր քաղցրութեամբ ընտրել զշահելն
յապաշխարութենէ ապաքինութի-
'ի ժողով դասու : Իսկ յառողջու-
թիւն գոլով, զանյոյս և զողջոցն
պատճառս ապականութեան՝ հա-
տու արով 'ի բաց կտրեալ, սատա-
նայի մատնէ զի խրատեսցին, ասէ, չը-
հայհոյել . և մնացականացն յանախ-
տական առողջութեան՝ զգուշութե-
տայր պատուէր և ըմպելի մշտնջե-
նալոյ 'ի նմին :

Բ . Հրեշտակ . քանզի քահանայ
հրեշտակ տեառն ամենակալի է , և
պատգամք 'ի բերանոյ նորա լսին,
վասն որոյ շրթունք նորա զգուշացին
գիտութիւն , Մաղաքիա ուսուցանէ .
վասն զի հրեշտակք ոչ զիւրեանց
ինչ, այլ զառաքչին առանց յաւե-
լուածոյ և պակասութեան պատմեն
բանս , առանց երկիւղի և պատկա-

ռանաց անակնածապէս, պատրեալ հրապուրանօք և ոչ յիմեքէ պատճառաց. քանզի որ կաշառաց յուսով և առձեռն պատրաստութեամբ, 'ի մօտոյ անդէն կամ աչառանօք երեսաց շոգմոգէ նենգաբանութեամբ, ոչ հրեշտակ պատգամաբեր այնպիսին և խաղաղութեան միջնորդ, այլ մատնիչ բանսարկու կոչեցեալ յանուանցն և յիրացն երևեսցի. և զիրաւացին առնուլ 'ի ժամանակի ըստ ուղիղ դատման պահանջանս վրիժուց, ոչ ոք ասասցէ անպարտ և անիրաւ գոլ. վասն զի ոչ ըստ ակամայ յանցաւորութեան գոցէ ողորմութիւն, այլ երբեւ զնախայօժար կամօք մեղանչական 'ի մեծամեծս ատելի եղեալ սատակեսցի, որպէս օրէնք հրամայեն արդարք: Ուրեմն զառաւելագոյնն ընկալցի մահաւ դատաստան առանց վրկանաց և ողորմութեան. զսոյն զայսու յեղանակաւ գործիչ այր, յԱստուծոյ առ մարդիկ բերողաց բան և կացելոց գլուխ ժողովրդեան: Իսկ հաւատարիմն և անմեղն 'ի բանս

Աստուծոյ՝ զհակառակն այսոցիկ պատուոյ բարգաւաճանս, վայելմամբ ուրախութեան յաւիտենական ընդ որս կան առաջի Աստուծոյ հրեշտակս՝ հանդիպեսցի։

Գ. Քաւիչ, յաղագս նախանձու և վրէժինդրութեան Աստուծոյ, քանզի և փէնէեսի կացելոյ 'ի մէջ՝ եղեւ քաւութիւն և արդեալաւ մահ. կամ խաղաղականաքն աղօթիւք ընդունելիովք Աստուծոյ՝ առնլով թողութիւն պարտաւորացն, որպէս Մովսէս, քանզի թէ թողուս, ասէ, սոցա զմեղս թող, ապա թէ ոչ և զիս ջնջեա 'ի գպրութենէն յորս գրեցեր։ Ո՛վ անբաղդատականի սիրոյն առ մեղանչականս, վասն փառացն Աստուծոյ և ուխտին հաստատութեան առ Աբրահամ, կամ արեամբ և խնկօք, ոչ որով Ահարոնն և յաջորդք իւր, այլ գաւինն Աստուծոյ բարձողին զմեղս մեր մտանել 'ի սրբութիւնն վայելչապէս ամենայն պարկեշտութեամբ զծերունական եւս խունկն, ըստ Յովհաննու,

ոսկեղինոք մատուցանելով, բերեալ ազատութիւն յանցաւորութեան։

Դ. Վարդապետ. որպէս զի որոց սիրեն մնանել 'ի սուրբն և աստուածային դպրոց՝ բաւական ելցէ տալ զիմաստութեան գծաւորութիւնս. ոչ նշանապէս, այլ ոմանց նախկըրթական, իսկ ոմանց զմիջինս հանճարոյն, և այլոց զծայրագոյնն. քանզի ամենայն մակացութեամբ աստուածայնով պարտի կատարեալ գոլ, զի մի՛ կարօտասցին ծանօթքն երիք ծածկեցելոյ խնդրոյ և տըրտմեսցին. և մի՛ ինքն կրել պարսաւանըս՝ ամաչեսցէ այժմ, և ապա կացեալ յայնժամ առաջի բեմին Քրիստոսի՝ տացէ դատ փոխանակ անգիտութեան առ այլովքն եւս թերութեամբք անձին։

Ե. Դասատիարակ. զի մի՛ 'ի միում միայն, այլ և յամենայն իրս ըստ առ 'ի մանկութենէ ուսմանցն՝ խրատեսցէ յարդարութիւն զմերձեցեալսն 'ի Քրիստոս Յիսուս. քանզի միով

կամ սակաւուք ոչ կարասցուք կա-
տարեալ լինել։

Զ. Հայր. սակս ոչ անձին այլ որդւոցն գանձելոյ՝ զորս ծնաւն 'ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն, և մի զայրացուցեալ զմանկութիւնն ինքն ատելի եղիցի։ Այլ սնուցանելով զնոսա ամենայն իմաստութեամբ և խրատու տեառն հանգիցէ 'ի նոսա և փառաւորեսցի, և ստասցի անուն բարիոք 'ի տեսողաց զնոսա. քանզի յորդիս իւր ծանիցի այր՝ ասէ գիր. դարձեալ՝ և պարծանք առն որդիք իւր, յայտ է թէ իմաստունքն և խրատեալք 'ի պատուիրանս Աստուծոյ. այլ և 'ի գաւազան սաստի և յանդիմանութեան, յորժամ պէտք իցեն ոչ խնայել, քանզի որ խնայէ 'ի գաւազան՝ ատեայ զորդի իւր. իսկ որ սիրէն ցանկ խրատէ. և առաքեալ՝ Որ մեղանչեն, ասէ, առաջի ամենեցուն յանդիմանեա զի և այլքն երկիցեն. բայց և պարծանք որդւոց հարք այնպիսիք, յորոց և զբարիոքն ընկա-

լան կեանս։ Արդ առ այս գլուխ բազումք են առակք բանից, բայց շատ առ այժմ այսքան։

Է. Դայեակ. առ 'ի անուանդ Հոգևորականին տիոց մանդուլեան, և զՋերմն գորովոյ արկանել 'ի վերայ տղայոցն 'ի Քրիստոս, զգուլթ կերակրեալ 'ի տկարուլթեանէ Ճաշակելեացն մտաց։ Նախ կաթամբ բանին մինչեւ եղիցին յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի. և կրթեալ Ճաշակելեացն առ ընտրուլթիւն բարւոյ և չարի՝ բաւականասցին զկատարեալն ընդունել կերակուր, և յանձինս իսկ ոչ խնայել առ սիրոյ նոցա։ Որպէս դայեակ մի ասէ որ անուցանիցէ մանկունս այնպէս գլթացաք 'ի ձեզ. հաճոյ լթուեցաւ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն այլ և զանձինս մեր, զի սիրելիք մեր եղերուք։

Ը. Աւետարանիչք. զի զուրախուլթիւն ատի կենաց և հանդերձելոցն տալ առատուլթեամբ 'ի լսե-

լիս սպասողացն. քանզի բարեպաշ-
տութեան բան, որ է առ ամենայն
ինչ օգտակար, ունի զաւետիս կե-
նաց զայժմուս և զհանդերձելոյն յա-
ւիտենի. և զէապէսն աւետիս, որ
է հոգին Ճշմարտութիւնն ըստ որում
ասաց տէր. Ահաւասիկ առաքեմ
զաւետիս հօր իմ առ ձեզ։ Ոչ միայն
'ի վերստին ծննդեանն օծմանն և
ձեռնադրութեամբ ձեռաց տալ նո-
րածնիցն, այլ և ցանկորդ վարդա-
պետութեամբ ուղիղ հաւատոյ և
անախտ վարուց պահել 'ի նոսա.
կամ զորտմեալն և հեռացեալ յա-
ղագս 'ի մէնջն պատճառաց չարաց
որ 'ի բանից և գործոց՝ այսրէն դարձ-
ուցանել, ընդդիմակ առաքինի վա-
րուց ունակութեան լինելով ա-
ռիթ։ Եւ այս իսկ է աւետարանեալ
խաղաղութիւն 'ի տեառնէ՝ հեռա-
ւորաց և մերձաւորաց. զոր 'ի վե-
րայ ելանելով բարձու լերինն հա-
ւատոյն Ճշմարտութեան՝ որոց կա-
րեն աւետարանել, 'ի տեառնէ ըն-
կալեալ զբան Սիոնի նորոյ և Երու-
սաղեմի, հրամայէ զօրութեամբ ու-

ժոյ բարձրացուցանել զբարբառ։ Ա՛ռ քեզ ամենայն իրաք, ո՛վ դու, թուի հայել հրամանականիս բանի դիտաւորութե, և ոչ պարտիս կալ 'ի զանխուլս՝ ծածկոյթ զբազմութիւնս առնելով, զի մի՛ ստուգականող թագաւորականին երևեալ հրամանի՝ անզերծ զվճիռն ունիցիս մահու. այլ զի քո գեղեցիկք երևին և ցուցցին ոտք որպէս աւետարանչի համբաւուն մեծին խաղաղութեան 'ի փրկութիւն անձին և 'ի փառս Քրիստոսի։

Թ. Հովիւ. զի ոչ զանձինս, այլ զխաշինս արածիցեն. քանզի և քաջն հովիւ ոչ անձին խնդրեաց ինչ հաճոյ լինել, այլ բազմաց զի ապրեսցին, յորոց վերայ եդեալ զինքն կամաւորութեամբ, 'ի գազանին ժանեաց 'ի բաց կորզեալ թափեաց։ Մի՛ և դու անփոյթ առնիցես ոչխարացն մեծագնի ժողովելոց, արասցես եթէ չիցես վարձկան 'ի մարմնի սերմանելով կամ կթելով զորս 'ի խաշանցն. զի մի՛ զապականութիւն

յաւիտենական փոխանակ այդորիկ ժողովեսցես։ Այլ հալածեա զգաղանան, զվիրաւորեալն բժշկեա, արկ 'ի վերայ ձէթ և գինի, զպատճառն ուրախութեան և զուարթութեան հոգոյ. մի՛ եղիցի գողանալ զոք աւազակին յարօտականաց քոց. մի՛ զքնով անկեալ կորուսանիցես. մի՛ յանծանօթ ճարակաց վայրս շրջեցուցանելով մոլորեցուցցես։ Եւ են սոքա տգիտական և օտարոտի ուսմունք. զի՞նչ այլ ինչ է քահանայից զտէր ոչ ճանաչել ասացեալն եթէ ոչ վայելումն 'ի նոցայն, զոր անուամբ կաթին և ասու նշանակեաց. և փոյթ վասն կենաց ոգւոյ նոցա ոչ բնաւ առնել. յորս յաւելու եւս՝ և զգէրան զենուլ, և զհաստահարուստն աշխատ առնել, որպէս թէ 'ի ճոխագունիցն սեղանս և 'ի բաժինս հասիցն զանձինս պարարելով՝ առանց խմորոյ հովուական բառնան թողուն զնոսա։ Իսկ զոտս ողջացն փչրեալ կարծեմ զեղծուցանել վարուցն իւրեանց ապականութեամբ զբաղումն՝ ոչ միայն

'ի խառնակեցացն , այլ և յերկեղա-
ծից գայթակղեցուցանել՝ և որ ինչ
առ այս և վասն այսորիկ բանք են
ասացեալ յեղանակօք լուսք'ի գիրս ,
կամ՝ պարզաբար՝ և գործք և կիրք
նոցա և յաղագս նոցա յոյժ երկայ-
նագոյնք են , և առ այժմուս բան
ոչ հարկաւորք ։

Ժ. Իսկ Զօրագլուխ կոչիլ , բաց
երևապէս ցուցանէ ոչ խաղաղու-
թեան այլ պատերազմի զայժմուս
գոլ ժամանակ 'ի հաւատս եկեղոց և
բարեպաշտից , առաջնորդութեամբ
հարց սրբոց և քահանայից . և ա-
ռաքինի զօրապետս՝ զայս ուսուցա-
նէ Պաւղոս ասելով . Ոչ է մեզ մարտ
ընդ մարմնոյ և ընդ արեան , այլ ընդ
իշխանութիւնս և ընդ պետութիւնս
և ընդ աշխարհակալս խաւարիս այ-
սորիկ , ընդ այս չարութեան որ 'ի
նեբքոյ երկնից . և զպիտանացուն
այսր Ճակատի զսպառազինութիւն ,
որպէս զի կարասցուք 'ի դիմի հար-
կանել չարին յաւուր չարութեան ,
և զմուխ նեռս նորա շինջուցանել

հրամայէ՝ և խրատ տայ առնուլ. և
էն ոչքա հաւատք, յոյս, սէր, քան-
զի սիրով վարկանիմ նշանակիչ զա-
սելն, թէ զտեղի կալջիք։ Արդ ա-
րութիւն, ճշմարտութիւն, աւետա-
րանական խրատու ունկնդրութիւն,
և վարդապետութիւն, հոգի տուրբ,
զորս այլաբանելով ասէ, վահան, և
սաղաւարտ՝ տուսեր՝ և գօտի՝ և կո-
շիկս։ Արդ որպէս ո՞ւ ոչ յարդա-
րիչ ճակատու և կազմիչ, այլ և նա-
խամարտիկ եւս և առաջին ախոյա-
նից. զի՞նդ բաղձնուլ ոք երբէք կա-
ցատցէ զ'ի վայր քարշողաւ տորին
մոռծութեամբ և մարմնականաւ.
քանզի ոչ ոք զինուոր ընդ կեանս
աշխարհիս պատաղեալ կարիցէ հա-
ճոյ լինել զօրավարին, այսինքն մե-
ծոյ նախարարապետին և թագաւո-
ր Յիսուսի Քրիստոսի. և եթէ մար-
տիկ ոք ոչ ոչ պատկի, եթէ ոչ ըստ
օրինին մարտիցէ. եթէ առանց օրի-
նին յաղթող՝ ոչ արժանի պատկի
դոլ դատեալ ելեւ. իսկ պարտեալն
յամենայնի՝ յոյս հարկաւոր էր
յաղթել՝ այլ և կարելի, զի՞նչ կրել

հանդերձեալ լցէ 'ի ժամանակի բաշխման յաղթանակացն՝ 'ի զայնոսիկ մատակարարողէ և յարդար դատաւորէ ։

ԺԱ. Պարզիչ կոչի ոչ անիր և վայրապար, այլ վասն զի ուսուցչի և յարդարողն առաւել քան յարուսաքին մարտս և յարուեստս՝ մերս պիտանան մանկունք, և առանձեալ տուան 'ի Քրիստոսէ 'ի ձեռս նոցա, որպէս զի առաջին հրահանգացն և սկսմնականաց թեւակոխութեամբք, և յոգիս նոցա կատարելութեան հիմնաւորեացն տեսուած. և 'ի ձեռն թեթեւագունիցն և փոքուն առ սակաւ սակաւ ընդելեալք և կըրթեալք, առնուլ զմեծագոյնն և առթուեցեալ ծանուցս բաւականացին. քանզի և ճիւաւորութեան և աղեղնաւորութեան և այլոց զինուց շարժականութեանց՝ առանց խրատու և 'ի մանկութենէն արուեստապէս վարժութեան, չիք հնար տեղեկութիւն առնուլ. նմանապէս և բռնամարտկութեան, և այլոց հան-

դիտականաց ուսմանց՝ յորս ինչ
չէք դժուարագոյն ուսանել քան
զկարգս քրիստոնէութեան։

ԺԲ. Իսկ լուսոյդ 'ի վերայ առա-
կոչութիւն՝ արանց Աստուծոյ աշ-
խարհի խորհրդածուաց 'ի տեառնէ
հրամայեցաւ, քանզի առատ և
առանց նախանձու ունելով ձեռն և
կամն՝ ոչ անարժան համարեցաւ
հաղորդս գոլ անուան զծառայն,
որք 'ի տգիտութեանս խաւարէ 'ի
նա ինքն 'ի լոյն ճշմարիտ հանդէր-
ձեալ էին մերձեցուցանել զաշխար-
հս, և յոլորտս տիեզերաց ինքեամբ
զմեծի լուսոյն տարածանել ճառա-
գայթ՝ և կրկնալի լուսով վարուցն՝
կացուցանել զմարդիկ փառաւորիչս
հօրն երկնաւորի, որոց յաջորդք
և անուանակիցք՝ յետ նոցայն՝ և
այժմուքս՝ յեկեղեցիս կացեալք՝
տեսուչք և հրեշտակք են. և հարկ
'ի վերայ կայ նախ առլի և պատա-
րուն այնու քաղցր գոլ լուսով,
որոց նոյն 'ի վերայ անուն գրու-
թեամբ կառուցաւ՝ յարաժամ և

անընդմիջաբար առ նա հայելով և 'ի հրամանս նորա խոկալով. ապա թէ ոչ, որոմ արդեաք յեղանակաւ ելցէ հնար կամակար յայլս զլուսոյն անցուցանել հեղու

զզջացեալք և կամ յերկիւղ պա-
կուցեալք սպառնալեացն յինքեանս
եկեսցեն, 'ի բաց զնստասրտութիւն
և զարհամարհանս եդեալ և ըզ-
բարս թշնամանողս. որպէս ինքն
համարձակեալ ասէր. Լուարուք
զբան տեառն, իշխանք սոդոմացւոց,
ունկն դիք օրինաց Աստուծոյ, ժողո-
վուրդք գոմորացւոց. և այլ սոյն-
պիսիք. այլ և յաղագս փրկականին,
ըստ որում և տէրն ինքնին քարոզէր
հանդարտ և քաղցր աղաղակաւ, որ
և աւագափողն ասելով. Ապաշխա-
րեցէք զի մերձեալ է արքայութիւն
երկնից. և վասն խառնին՝ ըստ որում
Յովհաննէս 'ի կողմն Յորդանանու
զմկրտութիւն ապաշխարութեան.
իսկ առ սադուկեցիսն և փարիսե-
ցիսն, խստագոյնս՝ ծնունդս իժից՝
ասելով՝ ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի բար-
կութենէ։ Այսպէս և առաքեալքն
սուրբք. քանզի և յայսմ ընտրո-
ղութիւնք ոչ դուշնաքեայ ինչ՝
վասն զի ոչ 'ի վերայ երկնք առանձ-
նական մասին որոշմամբ ասացեալ
է սա գործոց կամ բանից ըստ աւե-

տարանին, այլ հաստատակամէս և իբր սեռականագոյն անուամբ զբաւանդակն ունի յինքեան և ընդ ինքեամբ ոչքան ինչ աւետարանական ուսմանն և վարդապետութեանն է, զի քարոզեցաւ և քարոզի աւետարանն ըստ հրամանի տեառն ընդ ամենայն երկիր։

ԺԴ. Այլ և Տնկագործ, ըստ նըշանակի այլաբար անուանի վերակացուն վարդապետ յառ բանաւոր և իմաստուն տունկն աշխատութենէ, ըստ Պաւղոսի ձայնին. Ես տնկեցի, ասէ, Ապողոս ջուր եւ, այլ Աստուած աճեցոյց։ Նաեւ ինքն իսկ աճեցուցանողն տէր՝ այսու անուանի ըստ պիտոյից խնդրոյ 'ի տեղիս տեղիս գրոց։ Ես տնկեցի զքեզ այգի համակ ճշմարիտ՝ զիսարդ դարձալ ինձ 'ի դառնութիւն, այգիդ օտարացեալ՝ ասաց մարգարէին. և դարձեալ. Որթ բերրի տնկեցի 'ի նմա. և այլս բազումս այսպիսիս գտանեմք ասացեալ յաղագս այսր։ Արդ տունկ երկնային և բոյսք սքանչելի

մարդ յիմաստնոց եւս ոմանց ա-
նուանի ըստ սովորութեան գրոց ·
որոց զնչեստակարս աւելորդացն և
զանօգուտս 'ի պտղաբերացն՝ քշել
և յապաւել կարդեցար , որպէս զի
առ 'ի պտղաբերութիւն պատեհա-
գոյնն մնացեալ , առաւել եւս լեցի
պտղատու հանդերձ տեւականու-
թեամբն . և 'ի փոխաբերութենէ
ոչ միայն զանուն , այլ և զարուեստ-
ին պարտիս հանճարեղութիւն
աշխատագոյն . և առ տունկան տած
խնամոյ , պահել , ուռոգանել ջուրբ
վարդապետութեամբ , շուրջ բրել
և կակղացուցանել որ առ արմա-
տովն անպտղաբերին զնստութիւն .
և զի թէ հիւթեղէն ոչ լցէ՝ արկա-
նել աղբ առ 'ի ստունդ և պարար-
տութիւն յորդորական խրատուց՝
և ազգի ազգի առ նոսա դարմանք
գործոցն և բանից , այսպէս ածան-
ցաբար անուանին . և կարծրու-
թեամբ երկաթոյն բաժակեալ՝ որ է
բանին արբոյ : Իսկ զ'ի նմին մնացեալ՝
յետ 'ի խնամն վայելելոյ , 'ի բաց
հատանել որպէս զնչեստիչ մերձաւո-

ըացն պտղաբերից , և խափան եկե-
ղեցականին գեանոյ անկեցաւ տուն-
կին՝ և տուաւ մշակաց , զի զպը-
տուղն ոչ անձանց , այլ անկողին
պատրաստեսցեն . զի մի երբև զչարս
չարաւ կորուսցին 'ի սեառնէ այգ-
ւոյն , և զայդին այլք 'ի հաւատար-
մաց առցեն մշակաց :

ԺԵ . Այլ եթէ Տնկագործ և եթէ
Մշակ ասիցի՝ 'ի նոյն քերի , բայց սա-
կայն գոյ տարբերութիւն յարուեստս
և 'ի գործս նոցա , յորոց հաւաքեալ
զարժանաւոր իմաստութիւն և ըզ-
գիպողագոյն՝ անարժան և վարկպա-
ըազի ոչ է յայսոսիկ կոչեցեալոցն ,
զի մի 'ի վարձուցն պարտութենէ
զրկեսցին , զոր երկաքանչիւրոցն
խոստացաւ կողմանց տէր այգւոյն և
հնձոցն : Ոմանց ասելով . Երթայք և
դուք յայդին , և զոր ինչ արժանն է
առնուցուք . և ոմանց թէ Որ հնձէ
վարձս առցէ , և՝ յայսմիկ է բանն
Ճշմարիտ , զի այլ է որ սերմանէ՝ և
այլ է որ հնձէ . և՝ առաքեցի զձեզ
հնձել զոր դուք ոչ վաստակեցէք ,

այլք վատատակեցին և դուք 'ի վաս-
տակս նոցա մտէք։ Ուրեմն թեթևա-
դոյն քան զսերմանողացն կամի ա-
սել զհնձողացն աշխատութիւն. իսկ
զվարձն ոչինչ զանազանեալ, որպէս
վերագոյնն ասաց. Ո՞չ դուք ասէք
թէ այլ եւս չորք ամիսք են և հունձք
գան. ահաւասիկ ես ասեմ՝ ձեզ.
ամբարձէք զաչս ձեր և տեսէք զար-
տորայսն զի սպիտակացեալ են և 'ի
հունձս հասեալ. և որ հնձէն վարձս
առցէ, և ժողովէ զպտուղն 'ի կեան-
սն յաւիտենականս, զի որ սերմա-
նէն և որ հնձէ՝ հասարակ ցնծաս-
ցեն։ Արդ եթէ զանհնարին ծան-
րութիւն և մեծութիւն աշխատու-
թեան առաքելոցն փոքրկացուցա-
նել 'ի լսելիս նոցա քան զմարգա-
րէիցն կամեցաւ, զի անդանդաղս և
առանց զանգիտելոյ յառաջիկայն
կազմեսցէ պատրաստեսցէ գործ,
զինչ ունիցին ասել այժմուքս ա-
նուանեալք 'ի սոյն, որոց ոչ ընդ
Հրէայս և ընդ Սամարացիս և ընդ
հեթանոսս հակառակութիւն ինչ
վիճաբանութեան կայ առաջի, և ոչ

ընդ ծով և ընդ ցամաք կասկածագին ուղևորութեան ընթացք, կամ գա-
նից և կապանաց երկիւղ. ոչ քար-
կոծանք, ոչ բանդարգելութիւնք.
ոչ մահուն զանազանութիւն յան-
տանելի տանջանաց՝ և 'ի սրոյ ակն-
կալութիւն. և այնպէս անկեալ կան
անշարժ յիրս ընձեռեալս նոցա, որ-
պէս թէ չիցեն բնաւ տալոց համար՝
և ոչ ամենեւին յորդորին ոչ յերկեւ-
ղէ պատուհասից, և ոչ յառաքինի
գործոցն խոստացեալ վարձուց:
Զար է անգործութիւնս այս, քան
զամենայն անպտղութիւն բարեաց:

ԺԶ. Կալ գլուխ յեռ Քրիստոսի՝
մարմնոյ նորա՝ որ է եկեղեցի, և
զանդամոց իւրոց մանաւանդ թէ ըզ-
Քրիստոսի անդամոց, և ոչ մի ինչ
իրաք իւիք գարմանոյ առնել փոյթ.
զի՞նչ գործ է գլխոյ, ասա այր դու.
ոչ 'ի նմա են զգայութիւնք զգա-
լեացս ամենայնի. միթէ ինո՞ւ զաչս
զի մի՛ զլոյս տեսցէ յաչաղանաք բո-
լորի մարմնոյն, և ականջաց գրո՞ւնս
արդեաք եդ անլսութեան զձայնից

յօդաւորաց կամ անյօդից, կամ
թէ ըռընդաց զհոտոցն վտառս առ
նախանձու ապականեսցէ երբէք կամ
ձանձրութեան և վաստակոց. և բե-
ռանոյ և կզակաց շրուշակ և դանդա-
նաւանդ շուրջ կազմեալ եդ չուտել
և ըմբել առ կեալ. և ոչ արտաձայ-
նեալ բարբառ և բան, և յամենայն
մարմնոյն զատոյց զշօշափականն զ-
ըռութիւն, զի մի այրեսցի 'ի հրոյ՝
կամ 'ի ցրտութեան սառնամանեաց
պաղեալ զգասցէ ցաւոցն, և մի՛
զնոշոր ինչ կամ զողորկ՝ զկակուղ
և զխիստ՝ զանգայտ և զհոծ որակու-
թեան ծանիցէ զանազանութիւնս.
և ոչ ձեռք առ արուեստս և տու-
րևառութիւնս պատրաստք և գիւ-
ղաշարժք եղիցին, և ոչ մի ինչ 'ի մա-
սանց մարմնոյս գործի՝ յանկան իւր
հպեսցի, յոր 'ի բնութենէս պատ-
շաճեալ որոշեցաւ արարչագործու-
թեամբ Աստուծոյ, և զիաղդ կեն-
դանի բնաւ լցէ կամ ասասցի: Արդ
և ինքեան և որոց ընդ ինքեամբ այս-
պիսի ինչ ոչ գլուխ գործեսցէ կամ
խորհեսցի յորում ըստ մասանց

իբրեւ 'ի գլեկի նատեալ 'ի մոաց զըս-
պասաւորական կարգ բաշխեալ իւ-
րաքանչիւր գործիականաց մասանց
յարդարեալ կազմէ զբովանդակ ա-
մենապատշաճ յօրինուածով. զոր
որպէս յարացուցական առեալ
պատկեր, ամենայնիւ յայս կար-
գեալքն ժողովրդականքն պարտին
և ոչ մի ինչ զհակառակացն գործել,
զի մի ընդ նոսին և նախ քան զնոսա
ամենապատիկ առաւելութեամբ 'ի
վայր քարշեալ և կրեալ մղուցին բրու-
նութեան, իբր 'ի դագաթանէ յոյժ
բարձուէ և ծայրագունէ անկցին 'ի
խորխորատ անտանելի և տարտարո-
ական վհին, որ է բաժին ժառան-
գութեան յաւիտենականի առաջ-
նորդաց կուրաց, և հետևեալ նոցա
սիրողաց, ըստ որում առակեաց
տէր անշուշտ բանիւ: Քանզի առաջ-
նորդ զօրու և քաղաքօրէն քաղաքի
կամ նաւատոն՝ յընտրութենէ կա-
ցեալք իմաստնոց, և չափաւորաց՝
զանսխալ հմտութիւն իրացն 'ի նոսա
ատուգապէս գոլ վարկանողաց, ոչ
զի մատն լեցին որոշեցան յայնոսիկ

նոցայցն աւանդելոց, այլ զի հան-
ձարով՝ քան զկարծեօք բաւական-
նագոյնս վճարեսցեն զընձեռեալ
նոցա գործոցն մատակարարութիւն.
իսկ եթէ գայցի՛ ի նոսա նենգութիւն
խորամանգագործութեան՝ թուի
ինձ եթէ առանց փրկանաց և աղեր-
սաբանութեան հատուցանելոց են
զարդարապէս հատեալ ՝ի վերայ
նոցա կորստեանն պարտս, զորս
երկրորդ և նուազ, կամ՞ զնսկագոյնն
ասել՝ առ ոչինչ դնել է արժանաւոր
և համարել ՝ի դատաստանին առ
Աստուած մեղուցելոց, քանզի անդր
ընթացեալ էլանէ հօտին հոգեբար-
ձութեան թերատեսութիւն և ան-
փոյթութիւն. և տարացոյց առ այս
որդւոցն Հեղեայ անուանկնդրութի՛
հօրն Հեղեայ խրատու, վասն չծա-
ռայելոյ ժողովրդեանն Աստուծոյ.
և կրկին յայսր ասկս յոլովութիւնք
և սատկութիւնք յանձինս՝ և յա-
մենայն ժողովուրդն հանդերձ հար-
ցին յանդիմանչաւ թեթևագոյն
բանիւք, և որքանք ՝ի դարձէ սա-
պանակին տեառն և անկումն սանն

անարգութեամբ 'ի պատուոյ երի-
ցութեան . սակայն փոքր կարի և յոյժ
նուազ այս եւս է , որքան ըստ մար-
մնոյ միայն և վճարական եղեալ :

ԺԷ . Վասն այնորիկ և Տեսուչք
իսկ ասին և անուանին , զի և 'ի փո-
քրունցն թուեցելոց մի՛ ինչ արասցեն
անտես . քանզի կոյրն կոյր է յորս
ոչն տեսանէ . 'ի գիւտ միոյ ոչխարի
և դրամի միոյ կորուսելոյ խնդութի՛ն
է՝ ոչ գտողին եւեթ և տեառն , այլ
և այլոց եւս բազմաց դրացեաց կոչե-
ցելոց և բարեկամաց . զհրեշտակա-
կանացն ասել կարծեմ զօրութեաց .
և 'ի նոցանէ ոչ միայն 'ի կորստեա-
նէ գտանել ոչ ջանան , այլ և մղեն
ընկենուն զբազումս մանաւանդ ե-
թէ զանձինս 'ի կորստեան անգտա-
նելի գուբ , զի թէ յածեալքն ընդ
ծով և ընդ ցամաք միոյ ազագաւ ե-
կամտի՝ զոր վատթար օրինակաւ ան-
ձանց՝ ընդ ինքեանց և կրկնակի եւս
առնէին որդի գեհենին , այնպէս 'ի
տեառնէ յանցաւորս նախատեցան
յաւիտենից կշտամբանօք , նոքա զի և

զբուռնան և ոչ մի կորուսանեն ցանկ, զի՞նչ արդեւք լսելոց և կրելոց լցեն յայնմ յաւիտենի, քանզի հանապազորդ լսելով չգրեն ինչ ադամանդեայ ունելով սիրտ, ըստ փոխոտեաց լեւիաթանայ՝ և հոգի երկաթեղէն, յորմէ և նա զողինն կարծրութիւն ասի նշանակաւ բերել։

ԺԸ. Ասին և Հրաւիրակք՝ ոչ անխորհրդաբար և առանց ստուգութեան, քանզի յառաջագոյն և կանխագոյն է հրաւէր քան զվայելումն հրաւիրականացն բարութեաց։ Եւ սոքա նախակարգեալ առաքեցան օրինակ լմին, ոչ միայն 'ի մերձաւոր և պատրաստական ընթրեացըս՝ որ յեկեղեցւոջ այժմս տեսանի կոչել խրախութիւն. այլ և յապագային սեղանոյ անճառելի գինարբուս զուարճութեան. վասն զի որպէս մարգարէքն յայս կանխաւ հրաւիրեաց, և արդարացոյց, և փառաւորս արար զյառաջածանօթս ինքեան՝ Աստուած՝ առաքելական գործակցութեամբն 'ի կերպակցու-

թիւն պատկերի որդւոյ իւրոյ, սոյն-
պէս և որովք զկնի նոցին ընդ այսմ
և առ այսու՝ 'ի հանդերձեալն ժո-
ղովարան առաքեաց՝ ասէ, զծառայս
իւր. յայտ է թէ խմաստութիւնն
Աստուծոյ, որ յեւթն յեցուցեալ
սիւնս շինեաց զինքեան տունն, կո-
չէլ բարձր քարոզութեամբ, 'ի
սուրբ զենլեացն և 'ի գինոյն վայե-
լումն և 'ի կենագործակ հացիցն.
թողուլ զանզգամութիւն և կեալ.
նա և յետ հրաժարելոյ հրաւիրե-
լոցն առաջնոցն և չլինելոյ արժանի
պատրաստութեանն երանելի վայ-
ելմանն, զայլս ոմանս օտարս և ար-
համարհեալս և անծանօթս փոխա-
նակ նոցա մուծանել 'ի խնդարանն
առագաստ. տես զնախախնամա-
կանն տեսչութիւն, զոր ետ ծառայ-
ից 'ի ձեռս 'ի պատիւ մեծարանաց
նոցա, և 'ի փրկութիւն ունկնդրո-
ղաց կոչմանն: Սոքա և զաղտ մեղաց
կռուեալ յոգիս, և զներկուածն 'ի
խոր առաքեալ, և բնաւորապէս իմն
ընդմուծեալ թէ ըստ կարմրութե
որդանի, և եթէ եւս այլոյ իրիք գու-

նոյ նուազագունի ընկալան զօրու-
թիւն և իշխանութիւն լուանալ՝
զոմանց 'ի ձեռն մկրտութեան սրբոյ
աւազանին՝ որով է յորդեգրութի
Աստուծոյ մոանել. և զկիսոց յետ
այսորիկ գլորելոց՝ աշխատութեամբ ապաշ-
խարութեան՝ ըստ զանազանութեան
գործոցն մեղանաց, և ըստ ժամա-
նակին երկայնութեան, ըստ պատ-
շառանաց հասակին ժամանակի,
տեղւոյ, յեղանակի, գիմաց երկո-
ցունց և մաքրեալ ընծայեցուցանեն
վերատին Քրիստոսի, 'ի փառս
Քրիստոսի և Աստուծոյ Հօր 'ի ձեռն
ամենաբաւականի սրբոյ Հոգւոյն. և
հանեալ յանարգէ զպատուականն
լինին իբրեւ զբերան Աստուծոյ. և
այսպիսի որսորդութիւն գեղեցիկ,
չէ զանազանութիւն ըստ պարգեւի
յառաքելականէն պատուոյ: Որոց
հրամայեաց տէր. Եկայք և արարից
զձեզ որսորդս մարդկան. և եզակի
առ մի. Յայսմ հետէ զմարդիկ որ-
սացես 'ի կեանս. և մարգարէին
զայս յառաջագոյն խոստմամբ աւե-
տարանեալ. Առաքեցից նոցա որ-

որդս և որսացեն զնոսա յամենայն
լերանց, 'ի հակառակութենէ 'ի բաց
տանելով որսորդութենէ, զորմէ
ասէ. Իբրեւ վարմ ձգեալ առ 'ի Տա-
ճիրոնէն, կամ թէ 'ի գլուխ գահա-
ւանդի. զոր որսորդք յորս հաստա-
տեցին, զուռկան աւետարանին արդ-
կեալ յաշխարհիս ծով, և լցմամբ
մարդկան ձգեալ 'ի ցամաք՝ զբարի
բարին ժողովեն յամանս 'ի կրկին
շտեմարանս, իսկ զնոսանն 'ի բաց
յեկեղեցոյն ընկենուն։

ԺԹ. Եւ եթէ կոչի այսպիսին Տա-
ճարապետ, վասն զի ոչ զանշուն է
նիւթոյ շինուած 'ի ժառանգութի
գլխաւորի, այլ զբանական կենդա-
նեաց ժողովոյ, ո՞ ոք արդեւք հա-
կառակիցէ. քանզի յայսմ տաճարի
փեսայ թագակալ և արքայ արքայից
Քրիստոս 'ի Յովհաննէ վկայեցաւ.
Որ ունի, ասէ, հարսն նա է փեսայ.
իսկ բարեկամ փեսային որ կայ և
լսէ նմա՝ ուրախութեամբ ուրախ լի-
նի վասն ձայնի փեսային։ Այլ և
մանկունք այսր առագաստի առանց

ագոյ և ապամու�՝ վարին և կեան,
զփեսայն ընդ իւրեանց ունելով,
յետ որոյ 'ի գահ երկրորդութեան
ընտրեալ 'ի փեսայէն այր այսպիսի՝
զկամս կատարեալ նորա կարդեցաւ
'ի հրամանէ, և որ ինչ վայելուչն և
արժանաւոր է սահմանեալ, յետ
նորա առաքաստականացն՝ և զպի-
տոյից նորա առատութիւն զաւ 'ի
Քրիստոսէ հրամանաւորեալ, ա-
ռանց նախանձու զեղուլ յուրա-
խութիւն հոգւոց ձրի բաշխմամբ.
այսինքն, զնորա առեալնմա մատու-
ցանել ըստ Դաւթայ. լսել և մեծի
հարանածուին Պաւղոսի 'ի զգուշու-
թիւն առթեցելոյն. Խօսեցայ, ասէ,
զձեզ իբրև զկոյս մի սուրբ յանդի-
ման առնել Քրիստոսի. բայց երկն-
չիմ գուցէ ապականեսցին խմաստք
ձեր 'ի միամտութենէն Քրիստոսի, և
դարձեալ. Խորհուրդս մեծ է, բայց
ես ասեմ 'ի Քրիստոս և յեկեղեցի.
և այսոքիկ զեկուցանեն փոխանոր-
դաց նոցա զնոյն ունել մտածու-
թիւն. խմաստս սուրբս յերկաքան-
չիւր կողմանս զվայելուչս փեսաւորի

և հարանածուի մեծի այսորիկ խոր-
հրդոյ. և իմանալ և գործել ոչ հեղգ
և դանդաղկոտ երբէք գոլ, քանզի
Անիծեալ, ասէ, որ գործէ զգործ
տեառն հեղգութեամբ. իսկ ան-
գործն զի՞նչ կրելոց լցէ, հեղգու-
թեամբ գործողացն զայս բաժա-
նելով։

Ի. Իսկ հաւատարիմ կոչի ծա-
ռայ հակառակագրութեամբ առ
անհաւատարիմս ոմանս, որպէս
գոլն Յուդաս և մատնիչ, քանզի
զտէրունական ոչ մտերմութեամբ մա-
տակարարեալ և ուղիղ դատմամբ
ստանայ զնա իբրև խորիչ նենգաւ,
և զգերդաստանին յանձնեցելոյ և
հաւատացելոյն նմա տալ 'ի ժամու
զկերակուրն անփոյթ արարելոյ, և
ինքնասիրութեան տխտի՛ի չարիս մե-
ծագունին ծառայեցելոյ արբշռու-
թեամբ և շուայտութեամբ զոչն
անիրաւ, այլ կարի յոյժ արդար
վճիռ պատուհասից 'ի վերայ ածէ,
ըստ որում ասէս յաւետարանէ ան-
տի սրբոյ. զի և 'ի մարմնական իրս

հաւատարմութիւն առ տեառն՝ ծա-
ռայից՝ յազատութիւն ածեալ պա-
տուէաց զնոսա։ Եղիազար դամաս-
կացի՝ երէց տանն Աբրահամու,
յառ Աստուած բարեպաշտութե-
նէն և 'ի հաւատարիմն գոլոյ առ
ըստ մարմնոյ տէրն, և փոյթ յա-
ւանդեալ գործոյն նմա արբանե-
կութիւն, եղեւ այնպիսի սիրելի և
անուանի, ոչ միայն յայնժամ այլ և
այժմ և առ յապա վկայեալ 'ի տէ-
րութեան գրոյն։ Այս և զՅովսէփ
'ի տանէ ծառայութեանն 'ի կապա-
նաց բանդէ յաթոռ թագաւորու-
թեան նստուցանէր. նոյն և զԴա-
նիէլ. լուր զինչ պատասխանի Դա-
րեհի տայր'ի գլխոյ անսի առեւծուցն
յորժամ էին ընդ առաւօտն՝ յու-
սացեալ 'ի տէր վասն սիրելոյն փրկ-
կութեան, և 'ի բացուստ նախ քան
'ի բերան հասանել գլխոյն, առ ան-
ձուկ աղաղակեաց ասելով. Դանիէլ,
եթէ կարացաւ Աստուածն քո փրկել
զքեզ զոր դու յաճախ պաշտէիր.
իսկ նա. Աստուած իմ առաքեաց
զհրեշտակ իւր՝ և եխից զբերան ա-

ռեւծուցս, զի առ նա հաւատարիմ գտայ և առ քեզ ոչինչ անիրաւեցայ։ Ուստի և Պաւղոս յորովակի խրատ տայ՝ միամտութեամբ սրտի և երկիւղիւ ծառայել տերանց, և 'ի հնազանդութիւն կալ իշխանաց, որոց ոչ կամիցին զաստուածպաշտութիւն կարդ խափանել. և եթէ առ ծառայակիցս և համատոհմիկս այսքան խնդրի հաւատարմութիւն, որչափ առ թագաւոր ամենայնի և Աստուած՝ պարտիմք անխոտոր ունել միտս՝ և առանց սայթաքելոյ վարս. մնաւանդ արժանաւորեալք յեկեղեցւոջ առաջինք գոլ և գլուխ անդամոց Քրիստոսի. Երանի, ասէ, ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Եւ զի՞նչ երանականին իցէ հատուցումն. բաղմեցուցանէ զնոսա և զօրսի ածեալ անցեալ պաշտեսցէ ըզնոսա։

ԻԱ. Այլ և Պահապան 'ի զգուշութենէ յարթուն գոլոյ յիրաւի անուանակոչի, ըստ որում և Դա-

ւիթ սալմոսէ 'ի վերայ հոգաբար-
ձութեանն և անընդհատ խնամոց
Աստուծոյ առ ժողովուրդն . Ոչ
ննջէ և ոչ 'ի քուն երթայ , ասէ , պա-
հապանն Իսրայելի . և յետ նորա
հովիւք և հեղինակ ժողովրդոց իրօք
և անուամբք պարտին ստորոգութիւն
ընդունել , զի մի ոք և մի յոչխարաց
և 'ի գառանցն Քրիստոսի կորիցէ ,
զորս արածել մեծին հրամայեաց
Պետրոսի . ինքն տէր հօտին խնդրէ
գործոյս այսորիկ հարկաւորութիւն ,
ըստ օրինի ցայգապահաց և ցերեկ-
կապահաց լինել վշտամբեր և տա-
րահանգիստ : Որպէս ասէր Յակոբ ,
Զցայգ ցրտակէզ լինէի , և զցերեկ
արևակէզ . այլ և զգողոնն յանձնէ
պահանջէի , և զդազանաբեկն առ
քեզ ոչ բերէի , Լաբան : Եւ եթէ
անբանից բնութիւն արօտականացն
ընտանեաց այսքան խնամոց և տա-
ռապանաց երկոց՝ 'ի նախախնամո-
ղաց ունի պէտս , և որով հովուէն
հօտերէց և երկեւղ և պատկառանս
'ի տեառնէն են . վասն որոյ զհաւա-
տարմութիւնն անբողջ և անլոյծ

ունի : Որպիսի՞ ապա առ հաւատա-
ցեալ մնաւոր գառինն ելցէ վայե-
լուչ և իրաւացի՝ ցուցանել հպա-
տակութիւն պաշտաման . կամ՞ քան
զոր բան ոչ՝ի վերը երկնչել և գողալ
պատկառանօք հանդերձ յաւանդո-
ղէն Քրիստոսէ , որ է տէր փառաց
և գնոց արեանն իւրոյ հօտի , և դա-
տելոց է խոյ առ խոյ՝ և ոչխար առ
ոչխար : Եւ այն զի խնդրէ ոչ միայն
պահել և արածել , այլ և զպա-
կասեալն զկորուսեալն գտանել , և
յաւելուլ՝ի թիւն , և զթիւրեալն
ուղղել , և զմոլորեալն դարձուցա-
նել , և բժշկել զբեկեալն . զծան-
րութիւն վաստակոցն այլք կրեցին ,
յաշխարհէ ամենայն հաւաքելով
խաշինս տեառն իւրեանց , զոչ ժո-
ղովուրդն՝ի ժողովուրդ գումարե-
լով , և զչիրեցեալն՝ի սէր . քեզ ոչ
այսպէս , այլ պահել եւ թ՝ և չտալ
կորնչել , կամ սովով կամ ծարա-
ւով ճնչել և հաշել , հաւատացաւ
և յամենայն պատահարից զգուշա-
նալ . զի եթէ զառաքելոցն թեթեւ
համարի զաշխատութիւն՝ ասելով .

Այլք վասատակեցին, և դուք 'ի վասատակս նոցա մտէք. ո՞ իբրեւ զծանուէ իշխեսցէ քրիստնջել զիւրոցն յեկեղեցւոջն քրտանց և վասատակոց. ոչ եթէ յոյժ չէ ծանր, ասեմ զայս, այլ բաղդատելով ընդ առաւել տաժանականին:

ԻԲ. Իսկ գանձ ունել՝ յաղագս բանին հաւատոյ իմացի ասել, զոր ալքայութիւն երկնից, Փրկիչն անուանէ՝ ծածկեալ յագարակի քարոզութեանն, և դնել ընդ ամենայն պատճառաց կենցաղոյս, նաև ընդ կելոյ և ընդ արեան. քանզի աշխարհս ոչ է գնելի՝ այլ հրաժարելի, առաւել՝ զի մի զանձինս արասցուք թշնամիս Աստուծոյ: Ի և բազմութիւն մանկանցն և քաջութիւն ազնուականութեանն գանձ արժանի պարծանաց և գոհութեան զՏեառնէ. Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած. քան զոր ոչինչ ճոխութիւն և բաստ պանծալի և երանելի է: Նմանապէս և անձնական առաքինութիւնք իւրաքան-

չիւր ումեք՝ որ կոչի քաջաբարու-
թիւն. և է սա խառն ընդ երկոսին՝
և անբաժանելի, զի և ոչ իսկ է կար
առանց սորա բարի ումեք գոլ, և
վճարել ինչ'ի հաճոյից Աստուծոյ,
ոչ հասարակական և ոչ յատկական
ունել հարատութեն աստուածային :

ԻԳ. Այլ կերակրիչ և արբուցա-
նող զհոգևորացն նշանակաւ ասի.
ոչինչ պակասեցուցանելով յորոց
երթան 'ի անուանդ և յաճուամն, 'ի
կատարելութիւն և 'ի զօրութիւն
հոգւոյ, յուրախութիւն և 'ի գե-
ղաւորութեն, յանմարմնական քա-
ջազգայութիւն, այլ և յառողջու-
թիւն սոցա ազգակցութիւն. զի
զայսպիսի խահագործել կերակուր
և մատուակեալ ըմպելի, արանց է
բարեաց և քաջուսումնութեամբ
հուչակաւորաց, որք բաւական են ա-
ծել հասուցանել զանկատար ոգիս
յայր կատարեալ 'ի չափ հասակի
կատարմանն Քրիստոսի :

ԻԴ. Իսկ զգեցուցանելդ՝ յոքնա-

տեսակ լսի . նախ առաջին յետ մերկանալոյ զհին մարդն գործօք իւրօք՝ 'ի ձեռն մկրտութեան աւազանին՝ 'ի հոգի սուրբ և 'ի ջուր զգեցուցանէն զՔրիստոս , ըստ որում ասէն առաքեալ : Իսկ եթէ դէպ լինի ասել դարձեալ մերկանալ գլորմամբ 'ի մեղս , թէպէտ և տաժանմամբ որ զգենուն՝ զգենու , և որ զգեցուցանէն՝ տայ , սակայն եթէ ոչ հանդերձեալ լցեն երկաքանչիւրքն յարհամարհանս գալ բարւոյն անձանց , հարկաւոր զաշխատութիւնն համարեալ է՝ զոր առաքեալ արար առ Գաղատացիսն և առ այլս ոմանս , վերատին երկնել մինչև նկարեսցի միւսանգամ 'ի նոսա Քրիստոս : Երրորդ , 'ի նահատակութեն մարտի զՔրիստոսի զենուորն ընդդէմ չար ախոյանին կազմեալ կռուելով , և ամենայն հակառակ զօրութեանցն որ ընդ նովաւ՝ զսպառազինութիւնն որ ըստ Փրկչին՝ զգենուլ հրամայէ : Չորրորդ , զի ոչ զբստ մասանց եւեթ զօրականս , այլ և զբոլորն զգեցուցանէ եկեղեցի 'ի հանդերձս ոսկե-

հուռա՝ գործակցելով առաձն և յաղագս նորա, որպէս զի կացուցէ ընդ աջմէ, դնել պատակ որպէս վեսայի, և զարդարելով զարդու որպէս հարսն։

ԻԵ. Եւ Նուիրիչ է՝ մատուցանելով Աստուծոյ զիւրան նորայա, եթէ զանձն և եթէ զայլ՝ սուրբ, մաքուր, յատակ, անարատ նուիրանոցաւ մեծաւ եկեղեցեաւ. ուրախացուցանելով զբարերարն Փրկիչ, և հաշտ արժանաւոր ընծայուելոյ թեամբ և ընտանեգունաւ. Կերայ, ասէ, զհաց իմ ընդ մեղու իմում, և արբի զգինի իմ ընդ կաթին իմում. քանզի նուիրեալ ընդ նմա բարեգործութիւնն 'ի մարդկանէ, և ընդ նոսին ինքեանս խրախանայ հաճեցեալ աստուածաբար։

ԻԶ. Այլ թէպէտեւ առաքեալ խորհրդաբանէ զտեսանէ ասելով. Մի միջնորդ Աստուծոյ և մարդկան. ըստ որում՝ համանդամայն է Աստուած և մարդ. համագոյ Հօր՝

վասն Ճշմարտապէս ծնունդ և բան
նորա գոլոյն՝ և Որդի միածին. և
համագոյ մեզ, յաղագս կատարեալ
մարդեղութեանն 'ի Կուսէն. ոչ
մերկ և անմարմին գոլով բան, որ-
պէս 'ի սկզբանէ, և ոչ մարդ սոսկ
և միայն՝ որպէս հաստատական ոք,
այլ յերկուց մի Տէր՝ և մի Որդի՝ և
մի Քրիստոս. և Աստուած, Աս-
տուած յԱստուծոյ բնութեամբ, և
մարդ կատարեալ՝ և աներկբայ 'ի
մարդկանէ՝ այսինքն 'ի Մարիամայ
աստուածածնէ։ Եւ դարձեալ զի
հաշտեցոյց զմեզ ընդ հօր իւրում,
յանձն իւր որովք կրեաց և որովք
գործեաց օրինակօք միջնորդու-
թեամբ ձգելով 'ի խաղաղութիւն։
Սակայն և ընտրելոց 'ի մարդկանէ
ծառայից իւրոց՝ զնոյն ըստ չափու
և բաւականապէս գործել ոչ անար-
ժան համարեցաւ. որպէս գլխոյ
մարգարէիցն, Մովսիսի, Նախ, և քա-
հանայից ոմանց և մարգարէից յետ
նորա, կամ դատաւորաց և թագա-
ւորաց. և զկնի ամբառնալոյն ին-
քեան յերկինս՝ առաքելոցն և զորս

նոքայն կացուցանէին փոխանորդս, և մինչեւ ցայսօր ժամանակի կացեալոց արժանաւոր սրբութեամբ, և ամենայն բարեձեւութիւնք բերեալ առ մարդիկ լինին. և մարդկայինք պատուղք առաքինութեան, 'ի վերայ առաջի նորա մատուցանին նուէր ընդունելի, և արդեալանին էջք բարկութեան Աստուծոյ 'ի ժամանակի վրէժինդրութեան, և խրատեալք մարդիկ բերանոյ նոցա բանիւք հեռացին 'ի սխալանաց որովք շարժի 'ի տանջել հաշտն և բարեբար միայն և փրկիչ: Բայց արդ յորովք 'ի նոցանէ ոչ ըստ Ճառեցեալոցդ բարեբերք և չարահալածք, այլ հակառակին են մատունք:

Դ. Ունել ինչ և դատողութեան հասարակութիւն առ միջնորդութիւն. քանզի օրինակ իմն և սա միջին ըստ ուղղութեան գոլով կըշռոց հակամիտել անիրաւութեան թոյլ տայ և ոչ բնաւ երբէք, այլ ստուգագոյն ընտրութեամբ ժողովեալ 'ի միտս զոսոխաց և զաղերատ-

լաց հակաբանաբար ասմունս, ՀԸՀ
դրիտ ըստ իւրաքանչիւր արժանա-
ւորութեան 'ի վերս սահմանելով
ածէ զվճիռ դատաստանին. վասն զի
յայնոսիկ 'ի հզօրագունից ընկա-
լան հրաման և օրէնս ոչ խոտորել
ոչ յաջ և ոչ յահեակ, այլ զմի-
ջինն գնալ անսայթաք արքունական
պողոտայ: Հրամայեաց և սէր ոչ
ըստ աչս դատել՝ այլ ուղիղ առնել
դատաստան. քանզի ըստ օրինաց
կարծիս տալ ունել աթոռ դատո-
ղութեան, և առանց օրինաց բերել
արտաքս վճիռ՝ զառ 'ի յԱստուծոյ
հարուածոցն առանց հրաժեշտի և
փրկանաց՝ ունի կրել սատակու-
թեամբ պատուհաս. որպէս ասէ ա-
ռաքեալ առ Անանիա քահանայա-
պետ. լուիցեն դատիչք եկեղեցւոյ
և պետութեան՝ քահանայից ա-
նուամբ եւեթ գունաւորեալք, և
երկիցեն 'ի գաւազանէ զօրութեան
Աստուծոյ. քանզի ոչ առ 'ի խրատ
զայս հարուած երանելին մարգա-
րէանայ մանկաբեր Պաւղոս, այլ 'ի
սատակումն կորստեան, և մի՛ ինչ

կարծեացեն օրինաց եկեղեցւոյ կամ դատեացին զոք առանց իրաւանց արդարութեամբ, թերեւս կարացեն զերծանել 'ի սատակողական անոի դանէ. դատաստան արդար դատեցարուք. ողորմութիւն և ճշմարտութիւն արարէք՝ ասէ աստուածազանն գիր. կորուսանել զերաւունս ոխակալաց և կաշառասիրաց է, և ոչ ծանօթից Աստուծոյ և պաշտօնէից, մի խաբեալ պատրեացուք յիմէքէ, գործել առաք զհակառակս օրինաց մերոց և աշխիճանաց:

ԻԸ. Արդ զինչ առաքեալ կամի ուսուցանել մեզ, յորժամ ասիցէ, Այսպէս համարեացին զմեզ մարդիկ՝ իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի, և հաղարապետս խորհրդոցն Աստուծոյ. արդ խնդիր է 'ի մէջ հաղարապետաց եթէ ոք հաւատարիմ գտցի. այլ քանզի խորհրդածուք ճշմարտութեանն և քարոզք բանին դերազանցեալ զպատուոյն և զերջանկութեանն ունին զօրութիւն և փառաւորապէս 'ի տունս Թագա-

ւորաց հաղարատպեսք, յորոց պարտ
է և հաւատարիմ գոլ և անխարդախ
յամենայն ի ըստ արժանի ընտրու-
թեանն և սիրոյ, և այնքան զի մինչ
ոչ ումեք կարծել յանտեղեացն
ինչ խորհել նոցա կամ գործել:
Նաեւ իսկ յայսքան համարձակու-
թիւն յանդգնութեան մտաբերել,
որպէս զի իշխել 'ի խոյզ արկանել
զանկասկած նոցա առ տեարն՝ և
հնազանդութեան և սիրոյ մտեր-
մութիւն, վասն զի հեռի է այսպիսի
կարծեաց քննութե 'ի ճշմարիտ բա-
րեկամութենէ: Ուստի և յաւելու 'ի
վերայ առաքեալ ասելով առ կորն-
թացիս. Այլ և ինձ այս անարգանք
են եթէ 'ի ձէնջ դատեցայց՝ կամ
բնաւ իսկ 'ի մարդկանէ. զի ոչ տայր
պատճառս 'ի պաշտամանն՝ յիւրաւի
զայս ասէ: Այսպէս ոչք արժանաւո-
րեցան պատուոյ վերակացուք եկե-
ղեցւոյ՝ ոչք զկնի առաքելոցն՝ եւս
պատշաճ և օրէն է և ոչ ստոյգ տալ
ումեք իշխանութիւն յաղագս թերի
վարուց 'ի վերայ ինքեանց սրել ըն-
լեզուս, ոչքան ի՞նչ հնար և կարո-

զութիւն, և մի թշնամանաց պա-
տուոյն և անձին դատապարտու-
թեան լինել առիթ և պատճառ.
վասն զի որոց շատն տուաւ առաւել
եւս պահանջեսցին :

ԻԹ. Զայսքան և զայսպիսիս յե-
կեղեցւոջ բարեկարգութեան յօրի-
նուածս՝ և հաճելի գրութիւնս, կո-
չեն համառօտիւ 'ի տեսչութենէ
յօրինման տնօրէնութեան, առ սո-
քօք և ընդ նոսին զամենայն յիշա-
տակելով՝ որքան ինչ յիշատակաւ
աւանդեցաւ 'ի տեառնէ քրիստո-
նէից՝ և յառաքելոց իւրոց, վարուց
և բանից պարկեշտութիւն. որոց
տնտես և մատակարար հաւատարիմ
է առաջակացն այսր մեծի և հրաշա-
փառագունի տան Աստուծոյ, որում
անտես ինչ արհամարհանօք և ոչ
արժանաւոր փութոյ 'ի վայելուչն
գոլոյ թագաւորին բնակողի և սրտա-
հաճոյ՝ ոչ եղեցի. զի և 'ի մարդկային
իշխանութենէ կարգեալքն տաճարաց
և արքունական սենեկաց և տանց
վերակացու յարգարիչք և փութա-

բալք ոչ ինչ և ոչ 'ի փոքունց ան-
գամ իշխեն անտես առնելով զին-
կենուլ 'ի հրամանացն առ 'ի զարդ
և 'ի շքեղութիւն արքունեացն. և
եթէ փոքունց և մահկանացուաց
երկիւղիւ այնքան նախախնամու-
թիւն բնակութեանն ապարանիցն
առնեն, իսկ ուր բնակէ Աստուած՝
և յորս գնայ ճեմի, որչափ ինչ
պէտք են ջանի և հոգոց յայսոսիկ
որոշելոցն արանց որպէս զի պատ-
շաճական և աջողակ նմա կազմես-
ցեն։ Նոքա զանշուշեան՝ իսկ գու
զմտաւորն և զբանական հաւատա-
ցար զարդարել արքունիս թագաւո-
րին անմահի և մեծի միայնոյ, և իշ-
խես ծուլանալ հեղգութեամբ և
մեղկութեամբ. արդարեւ ահ մեծ է
անկանել 'ի ձեռս Աստուծոյ կեն-
դանւոյ. սակայն են 'ի նոսա զոր ոչ
միայն անզարդ թողուն զսիրելին
Աստուծոյ տաճար, այլ և խոհերս
աղբոյ ժանտահոտի, և գաղանաց
պատառիչս 'ի նեղքս ընու։

1. Այլ զի 'ի տեսարանի աշ-

խարհիս կարգեաց կացոյց տէր հան-
գիստականս իւր անթուելիս և ան-
համարս ոչ զոգոյն ուսուցեալ հրա-
հանգս կամ զոլիմպիականն, և ոչ
զիսթիմեան և զնեմիականն և զկըռ-
վիամարտիկ, և զոր հասեւաւիկն ա-
նուանեն, և ոչ զայլս ըստ ժամա-
նակի և իշխանութեան յաւելեալս
անմտութեան խաղս, այլ զերկնա-
ւորացն նախանձելի և ցանկալի ա-
ռաքինութեան գուսպարս և ընդդի-
մամարտութիւնս. չարի ախոյենին
և մարմնական հեշտախտութեանց,
յորում տեսարանի ինքն հանգիստ-
ական և մարտադիր առաքինի յոյժ
գտեալ նախ մարմնով լինէր պատ-
կեալ ամենապատկառէս, և զկնիցն
իւրոց հանգիստականաց գոչէր զառ-
ինքն նմանութիւն. Քաջալերեցա-
ցուք զի ես յաղթեցի աշխարհի.
և նմանողք նորա յեա նորին կա-
ցեալք իշխան 'ի նմանէ յորկորքե-
ցան 'ի նոյն անուն վասն զնոյնս ա-
ռաքինաբար գործելոյ:

ԼԱ. Եւ յորոշելոյ զաւն 'ի վատ-

թարէ, և զպատուականն յանարդէ, և զդէմս և զգործս, այլ և զժամանակս մտանելոյ և ոչ մտանելոյ 'ի նելքս. միանգամայն և ոլքան ինչ մերոց իրաց և աւանդութեանց հաւատի գիտութեամբ որոշմանց տեղեկութիւն. տայ կոչել որոշող, յորժամ ոչ խառնակ և անընտիր և շփոթեալ ինչ 'ի տեսութիւն և 'ի գործ՝ կամ յայլ ինչ արտաքին 'ի նմանէ եղեալ կամ մուծեալ յեկեղեցի գտանիցի. այլ ըստ կարգի ամենայն և ըստ յարմարութեան որպէս խնդրեն եկեղեցւոյ օրէնք:

ԼԲ. Իսկ զի արք բարիք և կատարեալք 'ի ընդոյ զկամս Աստուծոյ՝ նորա կոչին կամք, խնդրոյ ինչ խորագունի չեն պէտք, որպէս Դաւթի ասէ նոյն ինքն տէր, գտի այր ըստ սրտի իմոյ որ արասցէ զամենայն զկամս իմ:

ԼԳ. Այլ ժառանգաւոր հասակակապէս և յատկաբար յաղագս օծութեան, քանզի այսպէս կոչել

սովորութիւն է զվիճակեալս՝ վասն առ որդին Աստուծոյ նմանութեան։

ԼԴ. Բայց կատարիչ զի ասի, նախ վասն մկրտութեանն, երկրորդ ձեռնադրութեան սակս. և ապա զի ամենայն ինչ յեկեղեցւոջ կանոնեալ ըստ բարիոք սահմանի՝ ի փրկութիւն նոքօք լինի կատարեալ։

ԼԵ. Եւ խորհրդածութեան բան՝ գերամբարձ ինն տեսանի, թէպէտ եւ այլ ամենայն, վասն զի մեծ և անճառելի է ուսմանս մերոյ տեսութիւն և զօրութիւն զոր ընկալաք յառաքելոց փրկչին, և ոչ դիւրաւս և յայտնիս ամենեցուն, այլ որոց տուեալ՝ ի շնորհաց հոգւոյն՝ ի ձեռն Քրիստոսի, որոյ մասին և սոքա ասին՝ ի խորհուրդ զեղբարս ածելով։

ԼԶ. Եւ Պաշտօնեայ՝ ոչ այս միայն զպէտս ընլով, այլ և բժշկապէս դարման խօթացելոց և վիրաւորաց մատուցանեն այն խնամով, յորս հպարտութիւն ամբարտաւանու-

թեան ոչ երբէք կարասցէ լինել գամագիւտ, զհետ երթալով խրատու և հրամանաց հեզոյն և խոնարհի տեառն և Աստուծոյ մարմնացելոյ բանին, որ ոչ էկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել և տալ զանձն փրկանս փոխանակ բազմաց. և սփածեալ ղենջակ՝ արկանէր ջուր 'ի կոնք և մատուցեալ լուանայր զոտս աշակերտացն և ծառայից՝ վարդապետն և տէր, և սրբեալ մաքրէր ղենջակաւն: Եւ վասն զի զանձառելին կատարէր խոնարհութեան պաշտօն օրինակ նոցա զի թէ ես տէրս և վարդապետս լուացի զոտս ձեր և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ. և երբեմն յորժամ խնդրէին ընդ միմեանս աշակերտքն թէ ո՞ 'ի մէնջ իցէ մեծ, առակաւ մանկան ցածուցանէր զոգւոյ նոցա ամբարձամտութիւն, այլ և հեթանոսացն իշխանօք և մեծամեծօք, իբր նախատինս իմն դնելով զորդւոցն որոտման արգելոյր անպատշաճ խնդիրս. և այլ իմն ուսուցանէր նոցա և ամենեցուն հնար և արուեստ բարձրանալոյ,

զծառայն և պաշտօնեայ ամենեցուն
լինել և վերջին. զի և ինքն մտադիւ-
րութեամբ ծառայեաց բազմաց.
ապա ուրեմն բարձրն այն և նախա-
գահ ամենայն երկրաւոր իշխանու-
թեան, մանաւանդ եթէ գերաշխարհ-
հիկ և երկնաւոր իշխանութիւն, ոչ
այլ ինչ ըստ Ճոխութեան իրաց և
անուանց է և ասի, քան եթէ պաշ-
տօն սարկաւագելոյ բազմաց. ես
եմ ասէ 'ի միջի ձերում իբրեւ ըզ-
ծառայ, և աշակերտն՝ զպաշտօնն իմ
փառաւոր առնեմ ասէ, և զմեզ
ծառայս ձեզ վասն Քրիստոսի. և
եթէ ամենայն ինչ ձեր է, եթէ
Պաւղոս եթէ Կեփաս եթէ Ապո-
ղոս. և արդ ուր իցեն վիսաբարոյ
հպարտքն, որք իբրեւ զգոռոզս Ճո-
խանան մեծամտութեամբ և թշնա-
մանօք, վասն զի ոչ գիտեն զկոչմանն
և զիշխանութեան գիպաւորութի՞ն,
և եթէ ո՞ւմ իցէ պարտ նմանել։

ԼԷ. Այլ Ազգարարս 'ի գիտա-
նոցն կացեալ վերայ՝ և զգուշակս
յարձակման թշնամեաց. և եթէ ոչ

այնպէս ինչ լցէ՝ դէտս կոչել սովորութիւն է՝ և վարին գիրք յոլովակի հասարակականաւ անուամբ և բայիւք, այլ և բանիւ բացերեւականօք, նաեւ ամենայնիւ գրեալթէ սուղ ինչ նուազ. որովք առ օգուտ կենցաղոյս բնաւորեալ են մարդիկ առ գործ և բան ընդխառնեալ և վարել. որոյ օրինակաւ և զԵզեկիել կացուցեալ Աստուծոյ 'ի վերայ ժողովրդեանն, առէր ցնոյն ինքն. Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ, և ապա թէ՝ 'ի ձեռն փողոյ ազդ առնել մարդկան կացուցանողաց. սովորապէս բերեալ նմա օրինակ ասէր դարձեալ. Որդի մարդոյ, խօսեա առ որդիս ժողովրդեան քո՝ և ասասցես ցնոսա. երկիր յորոյ վերայ ածիցեմ ես սուր, և առցեն ժողովուրդ երկրին այր մի յինքեանց՝ և կացուցանիցեն զնա 'ի վերայ ինքեանց դէտ, և տեսցէ զսուրն եկեալ յերկիրն՝ և փող հարցէ և ազդարասցէ ժողովրդեանն, և եղիցի որ լսիցէ զձայն փողոյն՝ և ոչ զգուշացի և եկեսցէ սուրն և հասցէ նմա, ա-

րիւն նորա 'ի գլուխ նորա եղեցի, զի լուաւ զձայն փողոյն և ոչ զգուշացաւ. և նա՝ զի զգուշացոյց՝ զանձն իւր ապրեցոյց։ Իսկ գէտն եթէ տեսանիցէ եկեալ զսուրն, և ոչ առնիցէ ազդ փողոցն՝ և ժողովուրդն ոչ զգուշացին, և եկեալ սուրն ըմբռնիցէ անձն մի, նա վասն անօրէնութեանն իւրոյ ըմբռնեցաւ, և զարիւն նորա 'ի ձեռաց գիտին խնդրեցից։ Արդ ըստ օրուամ քաղաք կամ գաւառ երկիւղ և կասկած ունելով բարբարոսական յարձակմանց, կացուցանեն գէտս 'ի վերայ աշտարակաց բարձանց՝ այլ և բլրոց գիտանոցաց 'ի զգուշութիւն փրկութեան և նորա ամենայն շրջահայեցութեամբ գիտեալ զկողմանս առանց քնոյ և հեղգութեան՝ եթէ դէպ լինի գալ հէն 'ի թշնամեացն և ասպատակ, ազդեցութեամբ նորա ապրեալքն արժանաւոր պատուոյ և գովութեան զնա առնեն։ Իսկ եթէ քնով ըմբռնեալ կայ անհոգութեամբ՝ զփրկութենէ անտես արարեալ՝ պատճառ ումեք կորստեան լի-

նիցի, անձին առաւել նիւթեաց ըզ-
մտհաբերութեան։ Ա. յակոբ և քահա-
նայ զորքանս ընդ ձեռամբ ունիցի
և որոց եկաց գէա՝ ամենայն հաւա-
տարմութեամբ և փութով պարտի
զգուշացուցանել, որպէս զի մի՛ անկ-
ցին 'ի սուր սպառնալեաց տեառն.
քանզի թէ այժմ յաւազակին սպան-
մանէ և վերաց ապրեցուսցեն աշ-
խատութեամբ և սիրոյ ջերմու-
թեամբ ըստ օրինի իւրեանց, և զնը-
շան կենաց և յոգւոյն գիցեն գլուխ
և Ճակատ, յայնժամ զերծեալ 'ի
տապաստու՝ սիրոյն գթութեամբ
լինիցին. զի հանապազ իրաւացի և
պատկանաւոր է զոսոխին դարանա-
կալութիւն զեկուցանել և յուշ
առնել քաղաքացեաց եկեղեցւոյ,
թերեւս կարասցեն պահել առանց
վնասու, կամ զզնեասեալն ողջացու-
ցանել. քանզի և այս կարողութիւն
է գիտողաց եկեղեցւոյ թէպէտեւ
ոչ արտաքնոց. մի՛ զտարալսութիւն
ուրուք լռութեան առնուլ պատ-
Ճառ, և մի՛ յերկիւղ ընդդիմաբա-
նութեան ոգեսել զշրթունս. քան-

զի ոչ է այս գիտի՝ եթէ ոչ հանդէր-
ձեալ ի ցէ անձին կուսեալ խորխո-
րատ կորստեան : Իսկ եթէ առ լուս-
թեամբն և դանդաղանօք և սատակ-
ման եւս ոք լինիցի առիթ՝ 'ի նոցա-
նէ ումեք փոխանակ փրկութեան ,
զի՞նչ համար ունիցի տալ Աստու-
ծոյ , կամ զո՞ պատասխարան ապա-
ւինութեանց ահագին դատաստա-
նին՝ գոցէ ժամանակին . վասն զի
առաւել քան բանիցն քարոզու-
թեամբ՝ պարտ էր անձամբ 'ի հա-
ւանութիւն ընելոյ կացեալն ա-
ծել . զի ոչ այնպէս մարդիկ դիւ-
րաւ յորդորմանէ բանիցն , որպէս
յառաքինի դիմաց քարոզին . զոգ-
տութիւն ընդունել սովին՝ նմանա-
պէս և զապականութիւն վարուց .
քանզի ազդողագոյն և ձգական է
տեսիլ աչաց՝ քան զլուր ականջաց
յերկաքանչիւրս գործելեացն և
հրաժարելեաց :

Արդ այսքանեաց 'ի զօրութենէ
իրացն անուանց ատորակայից , զի
զմնացեալոցն լուռ եղէց , որչափ
քրտանց և աշխատութեան ցեն

պէտք. և զիարդ լուծաք և եղաք անգործ իբրեւ զմեռեալս. ոչ 'ի բանից խրատականաց և հրամանաց Աստուծոյ, և ոչ 'ի կենդանի օրինակաց հարցն սրբոց նախ եղելոց՝ զարթուցեալ երբէք ընդոստնումք յարժանաւոր կոչմանս գործ: Խոտորեցաք առհասարակ և հատաք յանպիտանութիւն. քանզի աղանհամեալ և սակասեալ 'ի բնաւորականն իւրմէն որակութենէ, չէ իմիք պէտանացու. ոչ յաղբ և ոչ յերկիր, ըստ տերունական գրոյն. որում փառք և պատիւ յաւիտեանս ամէն:



ԲԱՆՔ ԽՐԱՏՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ

ԲԱՆՔ ԽՐԱՏՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ

Գանձու խնայողութեան ոչ է գտանել ումեք գովեստ զուգական. ըստ որում և ոչ ներհակ է յաղքատութենէ, որպէս բնութիւն լինի, և ապականացու. ուրեմն աստուածային գոլով խոստովանեացի՝ ոչ առանց երաւանց։ Որոյ գիւտ, առաջին՝ սատակութիւն բաղձանաց. երկրորդ՝ յարձակումն խորհրդական, ոչ վայրապար. երրորդ՝ ախտից սատակումն, և օտարութիւն մարմնոյ. չորրորդ՝ երկոց և քրիստանց յոլովութիւն, կամ ճշգրտելով ասել՝ անքաւութիւն. որում լծակցի հարկաւորապէս աշխատութիւն և տոկ. հինգերորդ՝ տինա և

առաջին իսկ, երկիւղ տեառն։ Եւ
եթէ ոչ սոքօք պճնեսցի ոք, զի
այսպէս ասացից, գործականին
զայս վարկանելով շտեմարանել,
սպասել և անսալ բաղբաղելով՝
կարգի և ժամանակի, զնա և ոչ գէթ
ճանաչել զերին զօրութիւն ասա-
ցից. և յոյժ ուղղակի. վասն զի
Յանձն չարարուեսա՝ իմաստութիւն
ոչ մտանէ. իսկ առ պատրաստա-
կանս բարւոյն, զուղղակի դարձեալ՝
զկնի փորձ արկանելոյ՝ ուրախ առ-
նէ պտղոմն .քաղցրութեան իւրոյ
զաշխատասէր անվաստակ անձն,
յորում զանենդն որսացաւ բարս,
և զմարմին անմեղ, խուսել փախչ-
տիւ 'ի հակառակէն, ինքն սուրբ
գոլով և մարդասէր, որ իմաստու-
թեանն է հոգի։

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144